

Հայաստանում LԳԲՏ անձանց իրավունքների
ոտնահարումների վերաբերյալ մոնիտորինգ

2013

**Հայաստանում LԳԲՏ անձնական իրավունքների
ոտնահարումների վերաբերյալ մոնիտորինգ**

Երևան - 2013

Բովանդակություն

- 2 . . Տերմինաբանության բացատրություն
- 3 . . Ներածություն/ Մեթոդաբանություն
Վերլուծություն
- 7 . . LԳԲՏ հարցվողների ընդհանուր նկարագիր
- 7 . . Կրթություն
- 11 . Աշխատանք
- 13 . Ընտանիք
- 17 . Առողջապահություն
- 19 . Ոստիկանություն
- 23 . Բանակ
- 27 . Կրոն
- 29 . Հասարակական կյանք
- 31 . Առանձին դեպքերի իրավիճակային նկարագիր
- 37 . DIY ակունքի դեպքը
- 39 . Բազմազանության երթի դեպքը

Տերմինաբանության բացատրություն

ԼԳՔՏ	Լեւերուհի (կին նույնասեռական), զեյ (տղամարդ նույնասեռական), բիսեքսուալ (երկսեռական), տրանսգենդեր (զենդերափոխ)
Սեռական կողմնորոշում	Յուրաքանչյուր անձի զգացմունքային, հուզական, զգայական, ինտիմ և սեռական հակում որևէ սեռի այլ անձի հանդեպ
Նույնասեռական (հոմոսեքսուալ)	Անձ, որին բնորոշ է զգացմունքային, հուզական, զգայական, ինտիմ և սեռական հակում նույն սեռի այլ անձի նկատմամբ
Տարասեռական (հետերոսեքսուալ)	Անձ, որին բնորոշ է զգացմունքային, հուզական, զգայական, ինտիմ և սեռական հակում հակառակ սեռի այլ անձի նկատմամբ
Երկսեռական (բիսեքսուալ)	Անձ, որին բնորոշ է զգացմունքային, հուզական, զգայական, ինտիմ և սեռական հակում ինչպես նույն, այնպես էլ հակառակ սեռի այլ անձի նկատմամբ
Գենդերային ինքնություն	Անհատի կողմից սեփական գենդերի ընկալումն է (դու ինքդ քեզ ինչպե՞ս ես ընկալում՝ կին, տղամարդ, երկուսը միաժամանակ, ոչ մեկը, այլ տարբերակներ)
Գենդերափոխ (տրանսգենդեր)	Անձ, որի գենդերային ինքնությունն ու ինքնատարտահայտումը տարբերվում է նրա կենսաբանական սեռին բնորոշ ավանդական գենդերային դերերից, վարքից, գործողություններից և արտաքինից
ՍԿԳԻ	Սեռական կողմնորոշում և գենդերային ինքնություն
Յոմոֆոբիա	(Յոմո – նույն, ֆոբիա – վախ) վախն է, զգվանքը կամ ատելությունը նույնասեռականության, ինչպես նաև որպես նույնասեռական ընկալվող կամ նույնասեռական անձանց նկատմամբ

Ներածություն/Մեթոդաբանություն

2012 թ.-ի սեպտեմբեր, հոկտեմբեր ամիսների ընթացքում, «Հարավային Կովկասի գեյ սթրեյթ ալյանս. ԼԳԲՏ իրավունքների շուրջ իրավիճակի հզորացում Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում, «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» հասարակական կազմակերպությունը իրականացրեց ԼԳԲՏ անձանց իրավունքների մոնիթորինգ:

Մոնիթորինգը իրականացվել է քանակական հետազոտության ձևով: Իրագործման համար օգտագործվել է կիսաստանդարտացված հարցազրույցների մեթոդը: Հարցազրույցների ժամանակ տեղեկատվությունը ստացվել է կիսաստանդարտացված հարցաթերթի օգտագործման միջոցով, որը ներառում էր և՛ փակ հարցեր, որոնց պատասխանների տարբերակները առաջադրվում էին հարցվողին, և նա ընտրում էր մեկ կամ մի քանի պատասխաններ, և՛ բաց հարցեր, որոնց պատասխանները ձևակերպվում էին հարցվողների կողմից:

Մոնիթորինգն ուղղված է Հայաստանում ԼԳԲՏ անձանց իրավունքների շուրջ իրադրության ուսումնասիրությանը՝ կենտրոնանալով վերջին երկու տարիների վրա: Սույն մոնիթորինգը նպատակ ունի համալրելու «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» հասարակական կազմակերպության կողմից նախկինում արված երկու հետազոտությունները¹, որոնք իրականացվել են, «Մենք և մեր իրավունքները» ծրագրի շրջանակներում:

Մոնիթորինգի նպատակն է տեղեկատվություն հավաքել ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանվածության մակարդակի մասին՝ դիտարկելով կյանքի տարբեր ոլորտներ՝ առողջապահական, կրթական, աշխատանքային ոլորտներ, ընտանիք, բանակ, կրոն, ոստիկանություն, սոցիալական կյանք:

ԼԳԲՏ անձիք Հայաստանում դժվարիասանելի են, քանի որ շատերը քաջցնում են իրենց սեռական կողմնորոշումը՝ խուսափելով խտրական

1 «Մենք և մեր իրավունքները» (2010). ԼԳԲՏ անձանց իրավունքների ոտնահարման սոցիոլոգիական հետազոտություն;

«Մենք և մեր իրավունքները» (2012). ԼԳԲՏ անձանց հանդեպ հանրային վերաբերմունքը Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում (<http://www.pinkarmenia.org/hy/publications/>)

վերաբերմունքից, բռնությունից ու հասարակության օտարումից: Այդ իսկ պատճառով մոնիթորինգը չի կարող ապահովել ԼԳԲՏ համայնքի ներկայացուցչականությունը: Հարցվողների հասանելիությունը ապահովվել է ձեռնարկի մեթոդով՝ յուրաքանչյուր հարցվողի խնդրվել է հարցմանը մասնակից դարձնել նաև իր ծանոթ ԼԳԲՏ անձանց: Ընդհանուր առմամբ հարցմանը մասնակցել են 111 մարդ: Հայաստանի մայրաքաղաքից և մարզերից:

Քանի որ հարցվողների գլխավոր համախմբությունը կազմվել է ձեռնարկի մեթոդով, ապա անհնար է խոսել համախմբության համասեռության մասին: Այս գործոնը խոչընդոտում է վերլուծություն իրականացնել՝ ցույց տալով կորելիացիոն կապեր՝ հիմք ընդունելով հարցվածների տարիքը, սեռը, սեռական կողմնորոշումը և այլն: Այդ իսկ պատճառով վերլուծությունը ներկայացվում է հիմնականում ամբողջ խմբի համար ընդհանրացված կարգով՝ առանց առանձնացնելու տարիքային, սեռական կողմնորոշման և այլ գործոնների շուրջ հնարավոր առանձնահատկությունները:

ԼԳԲՏ անձանց իրավունքների մոնիթորինգի ընթացքում հավաքած տեղեկատվությունը համալրվել է նաև «Իրավական կլինիկա առավել վտանգի ենթարկվող բնակչության համար» ծրագրի շրջանակներում հասցեագրված դեպքերի իրավիճակային նկարագրությամբ, որտեղ ամփոփ ձևով ներկայացված են 2011-2012թթ.-ին ԼԳԲՏ անձանց իրավունքների ոտնահարումների կոնկրետ դեպքեր²:

² «Իրական աշխարհ, իրական մարդիկ» և, «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» հասարակական կազմակերպությունները իրականացնում են, «Իրավական կլինիկա առավել վտանգի ենթարկված բնակչության համար» ծրագիրը: Ծրագրի շահառուները չորս հիմնական խմբի մարդիկ են՝ ՄԻՎԿ (Մարդու իմունային անբավարարության վիրուս) վարակով ապրող մարդիկ, սեռական ծառայություններ տրամադրող անձիք, թմրամիջոց օգտագործողներ, ԼԳԲՏ անձիք:

Ծրագրի շրջանակներում գործում են անվճար և շուրջօրյա թեժ գծեր: Իրավական կլինիկան շահառուներին տրամադրում է հետևյալ ծառայությունները՝ իրավաբանական խորհրդատվություն, շահերի պաշտպանություն պետական և ոչ պետական կառույցներում, այցելություն ոստիկանության բաժին, եթե շահառուին հանիրավի ձեռքակալել են կամ բերման ենթարկել, հարկ եղած դեպքում՝ դատական պաշտպանություն: Ծառայություններն անվճար են և անանուն:

Հարցվողների ընդհանուր նկարագիրը

Ընդհանուր առմամբ հարցմանը մասնակցել է 111 մարդ, որոնցից 13-ը իգական և 98-ը արական սեռի ներկայացուցիչներ են: Սեռական կողմնորոշման ներկայացուցչականության առումով՝ հարցվողներից 4-ը կին նույնասեռական են, 62-ը՝ տղամարդ, 7-ը կին բիսեքսուալ են և 34-ը՝ տղամարդ բիսեքսուալ: Հարցմանը մասնակցել են նաև 2 արական և 2

Սեռական կողմնորոշում/ գենդերային ինքնություն	Կենսաբանական սեռ		
	Արական	Իգական	Ընդհանուր
Գեյ/լեսբուհի	62	4	66
Բիսեքսուալ	34	7	41
Տրանսգենդեր	2	2	4
Ընդհանուր	98	13	111

Աղյուսակ 1. հարցվողների բաշխվածությունն ըստ կենսաբանական սեռի և սեռական կողմնորոշման/գենդերային ինքնության

իգական սեռի տրանսգենդեր: (Աղյուսակ 1)

Հարցմանը մասնակցած ԼԳԲՏ անձանց զբաղվածության հիմնական տեսակը մասնավոր ոլորտի (43.3%) և հասարակական սեկտորում (13.5%) աշխատանքն է. քիչ չեն նաև գործազուրկ անձինք՝ 17.1%: Հարցվողների մեջ կան նաև պետական հիմնարկների աշխատողներ, ինքնազբաղվածներ ու ուսանողներ համապատասխանաբար՝ 9%, 6%, 7%: (Աղյուսակ 2)

Հարցմանը մասնակցած ԼԳԲՏ անձանց 59%-ը բարձրագույն կրթու-

Ջրաղվածություն	N ¹	%
Պետական կառավարման ոլորտի աշխատող	3	3
Պետական հիմնարկի աշխատող	10	9
Մասնավոր ոլորտի աշխատող	47	42
Չեռնարկատեր/անհատ ձեռներեց	1	1
Հասարակական սեկտորի աշխատող	15	14
Ինքնազբաղված	7	6
Ուսանող	8	7
Գործազուրկ	19	17
Տնային տնտես/ուհի	1	1
Ընդհանուր	111	100

Աղյուսակ 2. Հարցվողների բաշխվածությունը ըստ զբաղվածության

Կրթություն	N	%
Միջնակարգ/թերի միջնակարգ	5	5
Միջին մասնագիտական	10	9
Թերի բարձրագույն	23	21
Բարձրագույն	66	59
Հետբուհական	7	6
Ընդհանուր	111	100

Աղյուսակ 3. Հարցվողների բաշխվածությունը ըստ կրթության

Բնակության վայր	N	%
Երևան	88	79
Այլ քաղաք	21	19
Գյուղ	2	2
Ընդհանուր	111	100

Աղյուսակ 4. Հարցվողների բաշխվածությունը ըստ բնակության վայրի

թյուն ունի, իսկ 21%-ը՝ թերի բարձրագույն: Կան նաև միջին մասնագիտական (9%) և միջնակարգ կրթությամբ (5%) հարցվողներ:

(Աղյուսակ 3) Հարցվողների հիմնական մասը՝ 79%-ը, բնակվում է Երևանում: Հարցմանը մասնակցել են նաև Հայաստանի այլ քաղաքների բնակիչներ (19%) և մի քանի գյուղաբնակներ: (Աղյուսակ 4)

^{N3} օգտագործվում է որպես պատասխանների թիվը ցույց տալու սիմվոլ

ԼԳՔՏ իրավունքների պաշտպանվածության մարկարդակը

Ըստ ոլորտների

Ոլորտներում իրավախախտումների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է վերջին երկու տարիների կտրվածքով, քանի որ սույն հետազոտությունը շարունակական բնույթ է կրում և լրացնում է ավելի վաղ իրականացված հետազոտությունները:

Յուրաքանչյուր ոլորտ կքննարկվի առանձին-առանձին՝ դրանով իսկ ապահովելով ԼԳՔՏ անձանց իրավունքների ոտնահարումների մանրակրկիտ նկարագրություն յուրաքանչյուր ոլորտում:

Կրթություն

Հարցվածների կեսից ավելին (54%) վերջին երկու տարիների ընթացքում սովորել է որևէ կրթական հաստատությունում:

Այն հարցին, թե արդյոք զգացել են ուսումնական հաստատությունում սեռական կողմնորոշումը/գեներային ինքնությունը (այսուհետ՝ ՍԿԳԻ) թաքցնելու անհրաժեշտություն, հարցվածների 30%-ը միանշանակորեն համաձայնել է, իսկ 12%-ը թաքցնում է իր ՍԿԳԻ-ն, բայց ոչ բոլորից: Հարցվածների միայն 6%-ը չի զգացել սեփական ՍԿԳԻ-ն թաքցնելու անհրաժեշտություն: Իսկ մյուս 6%-ը կարծում է, որ ՍԿԳԻ-ն կրթական հաստատությունում քննարկելու կարիք չկա: (Աղյուսակ 5)

Աղյուսակ 5. Վերջին երկու տարիների ընթացքում ուսումնական հաստատությունում զգացել էք Ձեր ՍԿԳԻ-ն թաքցնելու անհրաժեշտությունը:	N	%
Այո, մշտապես	33	55
Այո, բայց ոչ բոլորից	13	21
Ոչ	7	12
Չեմ կարծում, որ ՍԿԳԻ-ն կրթական հաստատությունում քննարկելու կարիք կա	7	12
Ընդհանուր	60	100

ԼԳՏ անձանց մոտ գերակշռում է վախը առ այն, որ նրանց հանդեպ խտրականությունը անխուսափելի է, եթե ուսումնական հաստատությունում իմանան վերջիններիս սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության մասին:

Հարցվածների կարծիքները ՍԿԳԻ-ն ուսումնական հաստատությունում թաքցնելու պատճառների մասին հետևյալ են. հարցվածներից 23-ը պարզապես չի ցանկանում, որ ինչ-որ մեկն իմանա իր ՍԿԳԻ-ի մասին: ՍԿԳԻ-ն ուսումնական հաստատությունում թաքցնելու մեկ այլ պատճառ է հանդիսանում խտրական վերաբերմունքի դրսևորման ականատես լինելը, ինչը ևս նպաստում է նրան, որ ԼԳՏ անձիք թաքցնեն իրենց ՍԿԳԻ-ն (23): Հարցվածների մի մասն էլ պարզապես վախենում են, որ իրենց անձնական կյանքի վերաբերյալ տեղեկատվությունը կտրամադրվի այլ անձանց (23): Միաժամանակ, կա նաև վախ առ այն, որ նրանց ՍԿԳԻ-ն իմանալուց հետո շրջապատում նրանք խտրականության կենթարկվեն: (Աղյուսակ 6)

Ուսումնական հաստատություններում ԼԳՏ անձիք ավելի շատ խտրականության են ենթարկվում այլ ուսանողների կողմից:

Աղյուսակ 6. Ո՞րն էր Ձեր ՍԿԳԻ-ն ուսումնական հաստատությունում թաքցնելու պատճառ/ները	N	%
Չեմ ցանկանում, որ ինչ-որ մեկն իմանա իմ սեռական կողմնորոշումը/գենդերային ինքնությունը	23	25
Ականատես եմ եղել խտրական վերաբերմունքի դրսևորման	23	25
Վախենում եմ, որ իմ անձնական կյանքի վերաբերյալ տեղեկատվությունը կտրամադրվի այլ անձանց	23	24
Վախենում եմ հետագայում խտրականության ենթարկվել	16	17
Ինքս եմ արժանացել խտրական վերաբերմունքի	7	7
Վախենում եմ, որ կհեռացնեն ուսումնական հաստատությունից	2	2
Ընդհանուր	94	100

Այսպիսով, խտրականության տարբեր դրսևորումների հանդեպ վախը խոչընդոտ է հանդիսանում, որ ԼԳՏ անձիք բացահայտ խոսեն իրենց ՍԿԳԻ-ից:

Այնուամենայնիվ, հարցվողները հանդիպել են նաև խտրականության

տարբեր տեսակների դրսևորման՝ հիմնված նրանց ՍԿԳԻ-ի վրա: Այսպես՝ կրթական հաստատություններում խտրականության ամենից շատ հանդիպող ձևը, ըստ հարցվածների, ատելության կոչերն են, որոնք հնչել են իրենց հասցեին՝ ելնելով նրանց ՍԿԳԻ-ից (19): 17 հոգի զգացել է հեզմանք ու ծաղրանք իր հասցեին: Խտրականության թվով երրորդ ամենատարածված ձևերը շփման մերժումն ու արհամարհանքն են. 11 հոգի զգացել է այս տիպի խտրականությունն ուսումնական հաստատությունում:


Հետաքրքրական է այն, որ սահմանափակում կա նույնիսկ գիտահետազոտական աշխատանքներում ԼԳԲՏ թեմաներն արժարժեղու հետ կապված: 5 հոգի բախվել է այս խնդրի հետ: Այս ամենից հետևում է, որ նույնիսկ անհատական աշխատանքների տնօրինման հարցում ուսանողը սահմանափակված է, իսկ ԼԳԲՏ անձանց վերաբերող թեմաները քննարկելը դեռևս անթույլատրելի են համարվում ուսումնական հաստատություններում:

Ուսումնական հաստատություններում առավել քիչ հանդիպող խտրականության դրսևորումներ են ծեծը կամ ֆիզիկական բռնությունը (4) և հետապնդումը (3):

Աղյուսակ 7. Արդյո՞ք վերջին երկու տարիների ընթացքում ուսումնական հաստատությունում, ելնելով Ձեր ՍԿԳԻ-ից, ենթարկվել եք խտրականության նման դրսևորումների	N
Ատելության կոչեր	19
Հեզմանք, ծաղրանք	17
Շփման մերժում, արհամարհանք	11
Գիտահետազոտական աշխատանքում ԼԳԲՏ թեմաների սահմանափակում	5
Ծեծ/ֆիզիկական բռնություն	4
Հետապնդում	3
Այլ	2
Ընդհանուր	61


Ուսումնական հաստատություններում խտրական դրսևորումներն ավելի շատ հավասարը հավասարին մակարդակում է դրսևորվում: Հարցվածների գերակշռող մեծամասնությունը խտրական վերաբերմունք զգացել է այլ ուսանողներից: Որպես օրինակ դիտարկենք խտրականության առավել շատ տարածված տեսակները՝ ատելության կոչերն ու հեզմանք,

ծաղրանքը: Ատելության կոչեր ավելի շատ հնչել են ուսանողների կողմից (18), քան դասախոսների (7) կամ ադմինիստրատիվ աշխատակազմի (2): Նույնապես, հեզմանքի և ծաղրանքի հեղինակներ ավելի շատ ուսանողներն են եղել (17): (Նկար 1)



Աշխատանք

Վերջին երկու տարիների ընթացքում հարցվածների հիմնական մասը (85) դիմել է աշխատանքի: Սակայն նրանցից շատ քչերին են մերժել աշխատանք տրամադրել (3) կամ հեռացրել են աշխատանքից (1)՝ պատճառաբանելով:




ռաբանելով նրանց սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը: (Նկար 2)

Առաջին հայացքից կարող է թվալ, թե ԼԳԲՏ անձիք ոչ մի խնդիր չունեն աշխատանքային ոլորտում, քանի որ ՍԿԳԻ հիմքով խտրականությունը, կարծես թե, հիմնականում բացակայում է:

Սակայն այս երևույթին այլ բացատրություն կա, ինչը երևում է հաջորդող պատկերից.


Հարցվածների գերակշռող մեծամասնությունը ՍԿԳԻ-ն աշխատանքի վայրում մշտապես թաքցնելու անհրաժեշտություն է զգում (35), իսկ 23-ը կարծում է, որ այն աշխատավայրում քննարկելու կարիք չկա: 16-ը թաքցնում է, բայց ոչ բոլորից: Հարցվածների միայն 11-ն է կարծում, որ կարող է ազատորեն քննարկել իր անձնական կյանքը աշխատավայրում: Սրանից հետևում է, որ աշխատավայրում ՍԿԳԻ-ի հարցը հիմնականում չի արժարժվում, որն էլ նպաստում է խտրական վերաբերմունքի սակավությանը այս ոլորտում: (Նկար 3)

Աշխատանքային ոլորտում ԼԳԲՏ անձիք հիմնականում խնդիրներ չեն ունենում, քանի որ մշտապես թաքցնում են իրենց սեռական կողմնորոշումը/գենդերային ինքնությունը:




Հետաքրքրական է նաև այն փաստը, որ մասնավոր ոլորտում աշխա-

տող հարցվածները ավելի հակված են թաքցնելու սեփական ՍԿԳ-ն (19), քան մյուս ոլորտներում աշխատողները: Այս առումով, ավելի ազատ են հասարակական սեկտորում աշխատողները: (Նկար 4)



Այնուամենայնիվ, հարցվածները աշխատավայրում խտրականության դեպքերի հանդիպել են: (Նկար 5)



Աշխատանքային ոլորտում ամենից շատ հանդիպող խտրականության ձևերը հեզմանքն ու ծաղրանքն են: Հարցվածներից 14-ը բախվել են այս խնդրի հետ: Թվով երկրորդ խտրականության ամենատարածված ձևը ոչ հավասար վերաբերմունքի դրսևորումն է աշխատավայրում(8):

Առավել հազվադեպ դրսևորվել են նաև խտրականության հետևյալ ձևերը՝ սեռական բնույթի բռնի գործողություն (3), շանտաժ (2), շփման մերժում, արհամարհանք (2), հետապնդում (1), ֆիզիկական բռնություն (1), նվաստացում, ստորացում (1):

Ընտանիք


ՍԿԳԻ-ն թաքցնելու տեսանկյունից ընտանիքը նման է կրթական և աշխատանքա-

Ընտանիքում ԼԳԲՏ անձանց ՍԿԳԻ-ի նկատմամբ առավել հանդուրժող են քույրերը:

յին ուղորտներին: Նույնիսկ իրենց ընտանիքներում ԼԳԲՏ անձիք նախընտրում են լռել իրենց ՍԿԳԻ մասին: Այսպես, հարցված ԼԳԲՏ անձանց կեսից ավելին՝ 72-ը, չի բացահայտել իր ՍԿԳԻ-ն ընտանիքում, ինչը նշանակում է, որ ԼԳԲՏ անձանց մոտ գերակշռում է վախի զգացումը առ այն, որ նրանք խտրականության կենթարկվեն, կօտարվեն իրենց ընտանիքներից, եթե ընտանիքի անդամները իմանան նրանց ՍԿԳԻ մասին:

Այնուամենայնիվ, տվյալները ցույց են տալիս, որ կան նաև ԼԳԲՏ մարդիկ, ում ՍԿԳԻ մասին ընտանիքում տեղյակ են: Հիմնականում մայրերն ու քույրերն են այն վստահելի մարդիկ, ում ԼԳԲՏ հարցվածները իրենք են տեղեկացրել իրենց ՍԿԳԻ մասին՝ համապատասխանաբար՝ 11 և 13 հոգի: Սակայն շատ են նաև դեպքերը, երբ ընտանիքի անդամները ԼԳԲՏ անձանց կամքին հակառակ են տեղեկացել նրանց ՍԿԳԻ մասին: Այս դեպքում կրկին գերակշռում է մայրերի (7) ու քույրերի (4) թիվը: Երրորդ տեղում է բոլորը պատասխանը, որը այս դեպքում ավելի մեծ թիվ է կազմում, քան մյուս դեպքում, երբ հարցվողն ինքն էր բացահայտել իր ՍԿԳԻ-ն: Այսինքն՝ ԼԳԲՏ անձանց կամքին հակառակ նրանց ՍԿԳԻ-ի բացահայտումը ավելի հակված է դառնալու բոլորի իրազեկվածության առարկա, քան այն դեպքում, երբ ԼԳԲՏ անձն ինքն է տեղեկացնում իր ՍԿԳԻ մասին: Երկրորդ դեպքում ԼԳԲՏ անձը ինքն է տնօրինում տեղեկատվությունը և նախընտրում է դրա մասին տեղեկացնել միայն սակավաթիվ թվով մարդկանց:


Հետաքրքրական է նաև այն փաստը, որ ԼԳԲՏ անձանց ընտանիքներում հիմնականում քույրերն են ամբողջությամբ ընդունում նրանց ԼԳԲՏ անձ լինելը՝ 13: Այս առումով մայրերը ավելի քիչ հանդուրժող են և գտնվում են երկրորդ տեղում՝ 7:




Նշենք նաև, որ նույնիսկ այն դեպքում, երբ ԼԳՏՏ անձանց ՍԿԳԻ մասին ընտանիքում իմացել են նրանց կամքին հակառակ ու քչերն են ամբողջովին ընդունում այդ փաստը, այնուամենայնիվ, ԼԳՏՏ անձիք շարունակում են ապրել ծնողների և ընտանիքի մյուս անդամների հետ: Հարցվածներից 82-ը հարցման պահին ապրում է ծնողների և ընտանիքի այլ անդամների հետ: Մեծակ ապրում է հարցվածներից 12-ը: Ձուգընկերոջ հետ ապրում է հարցվածներից 6-ը: Նույնպիսի ցուցանիշներ են գրանցվել նաև ընկերների հետ ապրողների շուրջ: Կան նաև ԼԳՏՏ անձիք, ովքեր ստեղծել են սեփական ընտանիքները և ապրում են ամուսնու/կնոջ և երեխաների հետ: Նշենք, որ այս ընտանիքների մեջ չեն մտնում նույնասեռ ընտանիքները: (Նկար 7)

Ընտանիքի անդամներից ՍԿԳԻ թաքցնելը զերծ է պահում նաև խտրականության տարբեր դրսևորումներից, որոնք կարող են ի հայտ գալ հակառակ դեպքում: Սա են վկայում այն հարցվողների պատասխանները, որոնց ՍԿԳԻ մասին տեղեկացել են ընտանիքում:

Ընտանիքում առավել հանդիպող խտրականության դրսևորումներից են հոգեբանական ճնշումները: Հարցվողներից 23-ը հաղորդել են նմանատիպ խտրականության մասին: Երկրորդ, առավել հաճախ հանդիպող խտրականության ձևը ընտանիքում ՍԿԳԻ-ն փոխելու ճնշումներն են (16): Քիչ չեն նաև դեպքերը, երբ, իմանալով անձի ՍԿԳԻ-ի մասին, նրան ան-



տարբերության են մատնել(12): Առավել քիչ հանդիպող դեպքերից են ֆիզիկական բռնությունը (5), ունեցվածքից, ֆինանսական միջոցներից զրկվելը (4), փակի տակ պահելը (4): Եղել են նաև դեպքեր, երբ ԼԳԲՏ անձին տանից դուրս են հանել՝ իմանալով նրա ՍԿԳԻ մասին (4): (Նկար 8)




Ինչպես և սպասելի էր վերը ներկայացված արդյունքներից, խտրակա-
նության տարբեր դրսևորումների հեղինակները ավելի հաճախ մայրերն
ու քույրերն են, քանի որ հիմնականում հենց նրանք էլ տեղյակ են ԼԳԲՏ
անձանց ՍԿԳԻ-ից:

Առողջապահություն

Հարցվողների գերակշռող մեծամասնությունը վերջին երկու տարիներ
ի ընթացքում դիմել կամ ուղղորդվել է առողջապահական որևէ հաստա-
տություն՝ բժշկական ծառայություն-
ներ ստանալու նպատակով (93):
(Նկար 9)


*Առողջապահական
հաստատություններում
ամենից շատ հանդիպող
խտրականության ձևը
անհարգալից, հեզմական
վերաբերմունքն է:*

Ինչևէ, նրանց միայն 14-ն է են-
թարկվել խտրական վերաբերմունքի
առողջապահական հաստատություն-
ներում: Բժշկական ծառայություններ ստացած ԼԳԲՏ անձանց մնացած
79-ը խտրական որևէ դրսևորման կամ կանխակալ վերաբերմունքի չի
հանդիպել՝ ելնելով իր ՍԿԳԻ-ից:



Հարցվածներից մնացած 14-ը հանդիպել է կանխակալ վերաբերմունքի հետևյալ ձևերին:

Հիմնականում, խտրականության դեպքերը անհարգալից, հեզմական վերաբերմունքն է կամ վիրավորանքը: Այս տիպի խտրականության 14




դեպք է հաղորդվել հարցվողների կողմից: Երկրորդ անենահաճախ հանդիպող խտրականությունը բժշկական ծառայություն ստացողի անձը և ՍԿԳԻ-ն այլ բուժաշխատողների հետ քննարկելն է: Քիչ չեն հանդիպում նաև դեպքերը, երբ սեռական կողմնորոշումը դիտարկվել է որպես հիվանդություն (8 դեպք): Եղել են նաև դեպքեր, երբ բուժական հաստատություններում հրաժարվել կամ սահմանափակ ծառայություններ են տրամադրել ԼԳԲՏ անձանց (5): Հարցվողների կողմից նշվել են նաև խտրականության մի շարք այլ դրսևորումներ, որոնց նրանք բախվել են առողջապահական հաստատություններում: Դրանք ավելի մանրամասն ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 8. Ինչպե՞ս է դրսևորվել առողջապահական հաստատության աշխատակցի կողմից Ձեր նկատմամբ կանխակալ / խտրական վերաբերմունքը	N
Անհարգալից, հեզմական վերաբերմունք / վիրավորանք	14
Քննարկել են Ձեր անձը և Ձեր սեռական կողմնորոշումը / գենդերային ինքնությունը այլ բուժաշխատողների հետ	11
Դիտարկել են Ձեր սեռական կողմնորոշումը որպես հիվանդություն	8
Յրաժարվել են / սահմանափակել են տրամադրել բժշկական ծառայություններ	5
Պահանջել են լրացուցիչ թեսթեր / բժշկական անալիզներ	4
Բժշկական ծառայություններ տրամադրելու համար պահանջել են լրացուցիչ գումար	4
Ձեր ծնողներին կամ երրորդ կողմին տեղեկացրել են Ձեր սեռական կողմնորոշման / գենդերային ինքնության մասին	2
Օգտագործել են լրացուցիչ հիգիենիկ պաշտպանիչ միջոցներ (օր. բժշկական դիմակ)	1
Հիվանդության մանրամասների և բուժման հնարավոր տարբերակների մասին չեն տեղեկացրել	1
Շանտաժ	1
Սեռական բնույթի բռնի գործողություններ	1
Առանց Ձեր համաձայնության Ձեզ ենթարկել են բժշկական / գիտական փորձարկումների	1
Այլ	1
Ընդհանուր	54

Ոստիկանություն

Ոստիկանությունն այն կառույցներից է, որն անմիջականորեն կապ ունի խտրականության դեպքերի բացահայտման, դրանց կանխարգելման և սանկցախնդրի կիրառման հարցում: Միաժամանակ, այն նաև առանձին




կառույց է հանդիսանում, որտեղ ևս LԳԲՏ անձիք հաճախ հանդիպում են խտրականության դրսևորման:

Վերջին երկու տարիների ընթացքում հարցված LԳԲՏ անձանցից 21-ը դիմել է ոստիկանություն որևէ հարցով, սակայն նրանցից միայն 5-ն են արժանացել խտրական վերաբերմունքի՝ ելնելով նրանց ՍԿԳԻ-ից: (Նկար 11)

Իրենց ՍԿԳԻ-ի պատճառով խտրականության ենթարկված անձանց հանդեպ ոստիկանության ծառայողը հիմնականում դրսևորել է անհարգալից, հեզմական վերաբերմունք (5 դեպք) կամ չի ապահովել ծառայությունների պատշաճ մակարդակ (5 դեպք):


Եղել են նաև ֆիզիկական բռնության և շանտաժի մեկական դեպքեր: (Նկար 12)



Հատկանշական է այն, որ խտրականության մի ձևի դրսևորումը ուղեկցվում է այլ ձևերով, ինչի հետևանքով խտրականության ենթարկված մարդը միաժամանակ իր մաշկի վրա զգում է մի քանի տեսակի խտրականություն:

Մոնիթորինգի ընթացքում փորձ է արվել հասկանալ, թե LԳԲՏ անձիք ինչքանով են առնչվել ոստիկանության հետ և ինչ իրավախախտումների են հանդիպել այս ոլորտում:

Հարցման ընթացքում պարզվեց, որ հարցվողներից 19-ը բերման են ենթարկվել ոստիկանության որևէ բաժանմունք:




Հիմնականում դրանք մեկ անգամ են պատահել (13), սակայն կան նաև մի քանի անգամ բերման ենթարկված հարցվողներ (5) ու մեկը, ում բազմիցս են բերման ենթարկել: (Նկար 13)

Բերման ենթարկելու պատճառները հիմնականում չեն կապվում բերման ենթարկված ԼԳԲՏ-ի ՍԿԳԻ-ի հետ: Դրանք կան վկայություն տալու պատճառաբանությամբ են արվել կամ օրինախախտության, որը սակայն կապված չի եղել անձի ՍԿԳԻ-ի հետ:

Բերման ենթարկված հարցվողներից փորձ է արվել նաև տեղեկանալ, թե որքանով են պաշտպանվել նրանց իրավունքները բերման ենթարկվելու ժամանակ, մասնավորապես՝ տեղեկացվել են արդյոք բերման ենթարկելու պատճառների մասին, ինչպես նաև բերման ենթարկված անձի իրավունքների մասին:

Եվ այսպես, բերման ենթարկված ԼԳԲՏ 19 հարցվողներից 12-ին տեղեկացրել են իրենց բերման ենթարկելու պատճառը: Սակայն միայն 2-ին են տեղեկացրել իրենց՝ որպես բերման ենթարկված անձանց իրավունքների մասին: Փաստորեն, ոստիկանության ծառայողները մարդու իրավունքների մասին իրազեկելու իրենց պարտականությունների մեջ թերաճում են: (Նկար 14)


Ոստիկանության հետ առնչությունը չի սահմանափակվում միայն ոստիկանական բաժանուններում կամ բերման ենթարկվելու ժամանակ հարաբերություններով: Ոստիկանության ներկայացուցիչների հետ առնչությունը կարող է ծավալվել առօրյա կյանքում ևս: Այդ իսկ պատճառով մո-



Գիթորինգի ընթացքում փորձ արվեց նաև տեղեկանալ ոստիկանության ներկայացուցիչների կողմից ԼԳԲՏ անձանց համդեպ խտրականության տարբեր դրսևորումների մասին:

Այստեղ պատկերն ավելի համընդգրկուն է, իսկ խտրականության տարբեր դրսևորումների թիվն ավելի շատ:

Հարցված ԼԳԲՏ անձանց գրեթե կեսը՝ 41 հոգի, հանդիպել է անհար-



զալից, հեզնական վերաբերմունքի ոստիկանության ներկայացուցչի կողմից: 21-ի նկատմամբ խիստ անձնական բնույթի հարցադրումներ են կատարել: Քիչ չեն նաև դեպքերը, երբ արձանագրություն չի կազմվել խախտված իրավունքի վերաբերյալ, երբ ԼԳՏՏ անձը դիմել է ոստիկանություն (13):

*Ոստիկանության կողմից
ԼԳՏՏ անձանց նկատմամբ
խտրականության դրսևորման
դեպքերը այլ ոլորտների հետ
համեմատած
ամենաշատն են:*

8 ԼԳՏՏ անձի չի տրամադրվել բժշկական օգնություն կամ այլ համապատասխան օգնություն: Ավելին, հարցվածներից 7-ը նույնիսկ շանտաժի են ենթարկվել ոստիկանության կողմից:

Ինչպես վերը նշվեց, 19 բերման ենթարկված ԼԳՏՏ անձանցից միայն երկուսին էին ոստիկանության ներկայացուցիչները տեղեկացրել իրենց իրավունքների մասին: Ավելին, պարզվում է, որ խախտվել են նաև նրանց իրավունքերը. 6 հոգու թույլ չեն տվել տեղեկացնել հարազատներին իրենց գտնվելու վայրի մասին, իսկ 6 հոգու նկատմամբ նույնիսկ ֆիզիկական բռնություն է կիրառվել:

Ոստիկանության ներկայացուցիչները խախտել են անձնական կյանքի իրավունքը՝ ծնողներին կամ երրորդ անձի տեղեկացնելով ԼԳՏՏ անձի ՍԿԳԻ մասին (5):

Մեկ անձի կողմից հաղորդվել է նաև ոստիկանության ներկայացուցչի կողմից սեռական բնույթի բռնի գործողության մասին: (Նկար 15)


Բանակ

Բանակը այն կառույցներից է, որի հետ ԼԳՏՏ արական սեռի ներկայացուցիչները⁴ անմիջական առնչություն են ունենում: Հայաստանում ժամկետային զինվորական ծառայությունը պարտադիր է, ինչը նշանակում է, որ արական սեռի յուրաքանչյուր ներկայացուցիչ, ով պիտանի է զինվորական ծառայության, պետք է ծառայի հայկական բանակում: Ենթադրվում է, որ ԳՏՏ անձիք նույնպես պետք է ծառայություն անցնեն բանակում, սակայն եթե հայտնի է դառնում նրանց ՍԿԳԻ մասին, ապա նրանք ազատվում են պարտադիր զինվորական ծառայությունից: Որ-

⁴ Հայաստանում իզական սեռի ներկայացուցիչները չեն զորակոչվում պարտադիր զինվորական ծառայության, այդ իսկ պատճառով Բանակ բաժնում օգտագործվում է ԳՏՏ հապավումը:

պես պատճառ նշվում է տվյալ անձանց հոգեկան առողջության խնդիրներ ունենալը:

Այնուամենայիվ, հարցված ԳՖՏ անձանցից 34-ը անցել է պարտադիր զինվորական ծառայության: 65 հարցված ԳՖՏ չի անցել պարտադիր զինվորական ծառայության, սակայն նրանցից միայն 13-ն են պատճառաբանել այն իրենց ՍԿԳԻ-ով: (Նկար 16)



Պատահական չէ, որ գերակայում է այն անձանց թիվը, ում ՍԿԳԻ-ի մասին բանակում պարտադիր ծառայության անցնելու գործընթացում չեն իմացել/ենթադրել: Ինչպես արդեն նշվել է վերևում, ԼԳՖՏ անձիք հիմնականում ամբողջությամբ կամ մեծամասամբ թաքցնում են իրենց ՍԿԳԻ-ն: Բանակը բացառություն չէ:

Ինչպես ենթադրելի էր հարցվածներից միայն մեկն է ծառայել բանակում միաժամանակ չթաքցնելով իր ՍԿԳԻ-ն: Մնացած բոլոր հարցվողները, որոնք չեն թաքցնում իրենց ՍԿԳԻ-ն պարտադիր զինվորական ծառայությունից ազատված են (10): (Աղյուսակ 9)

Բանակում պարտադիր զինվորական ծառայություն անցած ԳՖՏ անձանց հիմնական մասի ՍԿԳԻ-ի մասին տեղյակ են սահմանափակ թվով մարդիկ:

Բանակում զինվորական պարտադիր ծառայության անցնելու կամ դրանից ազատվելու որոշումը կայացնում է զինվորական կոմիսարիատը:

Այս կառույցում են հիմնականում զԲՏ անձիք հայտնում իրենց ՍԿԳԻ-ի մասին, և հենց այս կառույցն է որոշում անձը պիտանի է ծառայության համար, թե ոչ:


Ինչևէ, նույնիսկ այս կառույցում զԲՏ անձանց գերակշռող մասը չի

Աղյուսակ 9. ՍԿԳԻ-ի մասին տեղեկացվածությունը	Բանակում ծառայել եք		
	Այո	Ոչ	Ընդհանուր
Ոչ ոք չգիտի իմ ՍԿԳԻ-ի մասին:	2	2	4
Սահմանափակ թվով մարդիկ գիտեն միայն իմ ՍԿԳԻ-ի մասին	31	53	84
Ես չեմ թաքցնում իմ ՍԿԳԻ-ն	1	10	11
Ընդհանուր	34	65	99

հայտնում իր ՍԿԳԻ-ի մասին, ինչից հետևում է, որ զԲՏ անձիք զինվորական ծառայությունից ազատվում են այլ պատճառներով կամ այլ միջոցների դիմելով:

Այսպիսով, հարցված զԲՏ-ներից 18-ի ՍԿԳԻ-ի մասին զինվորական կոմիսարիատում տեղեկացվել կամ ենթադրել են, որի հետևանքով նրանցից 16-ը չի ծառայել բանակում՝ փստորոշվելով որպես հոգեկան առողջության խնդիրներ ունեցող: Միայն երկու հարցվող է նշել այն մասին, որ իրենց ՍԿԳԻ-ի մասին իմացել կամ ենթադրել են զինվորական կոմիսարիատում, սակայն նրանք ստանձնել են պարտադիր զինվորական ծառայություն: (Նկար 17)

Քիչ չեն նաև դեպքերը, երբ զինվորական կոմիսարիատում, իմանալով




Նկար 17

կամ ենթադրելով անձի ՍԿԳԻ-ի մասին, նրա հանդեպ խտրական վերաբերմունք են ցուցաբերել:

Ինչպես և սպասելի էր, զԲՏ հարցվողներից 10-ը հայտնում են այն մասին, որ զինվորական կոմիսարիատում իրենց ՍԿԳԻ-ն դիտարկվել է որպես հիվանդություն:

Չհնվորական կոմիսարիատում իրենց ՍԿԳԻ-ի մասին հայտնած 18 ԳՔՏ անձանց կեսից ավելին նկատել է, որ իր ՍԿԳԻ-ն զին. կոմիսարիատի աշխատակիցը քննարկել է այլ աշխատակիցների հետ՝ դրանով իսկ խախտելով նրա՝ անձնական կյանքի իրավունքը: Անձնական կյանքի իրավունքի մեկ այլ խախտում էլ գրացնվել է 9 հարցվողների մոտ, երբ նրանց խիստ անձնական բնույթի հարցադրումներ են արել:

Ինպես բոլոր մյուս բնագավառներում, այստեղ ևս քիչ չէ անհարգալից վերաբերմունքի արժանացած ԳՔՏ անձանց թիվը (9): (Նկար 18)
Այս բնագավառում չեն հաղորդվել ֆիզիկական կամ սեռական բռնի գործողությունների մասին:



Կրոն


Կրոնը կյանքի ոչ միանշանակ ընկալվող բնագավառներից մեկն է, որի հետ շատ հաճախ խնդիրներ են ունենում ԼԳԲՏ մարդիկ: Հիմնականում կրոնական կառույցները չեն ընդունում ՍԿԳԻ բազմազանությունը: Այս առումով հետաքրքրական է, թե ինչ դեր ունի կրոնը ԼԳԲՏ անձանց կյանքում:

Հարցվողների մոտավորապես մեկ երրորդը որևիցե կրոնական դավանանքի հետևորդ իրեն չի համարում (42):


Հարցվածներից 45-ը իրեն համարում է Հայ առաքելական եկեղեցու հետևորդ, չնայած այն փաստին, որ եկեղեցին բազմիցս մշտել է իր մերժողական տեսակետը ԼԳԲՏ անձանց վերաբերյալ:

Հարցվածներից վեցը ունի հավատք, սակայն ոչ մի կրոնական ուղղության հետ չի ասոցացնում այն: Հարցվածների մեջ կան նաև քրիստոնեության այլ ուղղությունների ներկայացուցիչներ՝ բողոքական (5), կաթոլիկ (4) և ուղղափառ (1): Հետաքրքրական է այն փաստը, որ կան ԼԳԲՏ անձիք, ովքեր իրենց համարում են քրիստոնյա, սակայն չեն ընդունում նրա որևէ ուղղությունը (5): (Նկար 19)

Չնայած Հայ առաքելական եկեղեցու կողմից ԼԳԲՏ չընդունման փաստին, Հայաստանի շատ ԼԳԲՏ անձիք այս եկեղեցու հետևորդ են:




Հարցվողների գերակշռող մասը, բացի հատուկ իրադարձություններից, հաճախ է այցելում կրոնական հաստատություններ (83): Միայն 25 հարցվածներ են, որ չեն հաճախում՝ պատճառաբանելով, որ աթեիստ են (8), կարիքը չեն զգում (10) կամ թերահավատորեն են վերաբերվում եկեղեցուն (7): (Նկար 20)



Նկար 20

Ստացվում է, որ կրոնական հաստատություններ հաճախակի հաճախողների թիվը գերազանցում է կրոնական որևէ դավանանքի հետևորդներից: (Նկար 21)




Նկար 21

Հասարակական կյանք

Յուրաքանչյուր սոցիալական էակի կյանքի անբաժանելի մաս են հանդիսանում հասարակական հարաբերությունները:


Այս բաժնում կներկայացվի ԼԳԲՏ անձանց ներգրավվածության աստիճանը հասարակական կյանքին ու դրանց առանձնահատկությունները: Ինչպես նաև փորձ կարվի հասկանալ հասարակական ակնկալիքների, ԼԳԲՏ անձանց կողմից դրանց ընկալման ու արձագանքման փոխկապվածությունը:

Ընկերական հարաբերություններ: ԼԳԲՏ անձինք հիմնականում չեն առանձնացնում իրենց ընկերների շրջանակը՝ հիմնվելով սեռական կողմնորոշման վրա: Նրանք հավասարապես շփվում են և՛ հետերոսեքսուալ, և՛ հոմոսեքսուալ մարդկանց հետ (62): (Նկար 22)



Քիչ չէ նաև այն մարդկանց թիվը, ովքեր ավելի շատ հետերոսեքսուալ մարդկանց հետ են շփվում: Այս պարագայում, թե ինչու են ԼԳԲՏ անձիք սակավաթիվ նրանց ընկերական միջավայրում, հարցվածները մի քանի տարբերակներ են առաջարկել: Նրանցից 12-ը հավաստիացնում է, որ ոչ մի միտումնավորություն չկա դրա մեջ, ուղղակի այդպես է ստացվել, որ իր ընկերական միջավայրում ավելի շատ հետերոսեքսուալ մարդիկ են: Մի մասն էլ (10) խոսում է արժեքային տարբերությունների մասին՝ շեշտելով, որ իր ու այլ ԼԳԲՏ անձանց արժեքները տարբեր են, ինչն էլ պատճառ է հանդիսացել իր ընկերական շրջապատում ավելի քիչ ԼԳԲՏ անձիք լինե-

լու համար: Մի մասն էլ անհանգստանում է իր անվտանգության համար, քանի որ գտնում է, որ ԼԳՔՏ անձանց հետ շփումը կարող է նորանոր խընդիրներ առաջ քաշել (7): (Նկար 23)



Նկար 23

Հարցվածներից 17-ն էլ նախընտրում է ընկերություն անել ավելի շատ ԼԳՔՏ անձանց հետ:

Ամենանախընտրված վայրերը ընկերների հետ հանդիպումների համար փաբեր, ակումբներ, սրճարաններն են, իսկ ամենաանհարմար վայրերը՝ բակերը: (Նկար 24)

Նախընտրած վայրերի թոփ 5-ում են նաև տունը (60), փողոցը (44), օնլայն հարթակը (41) և աշխատավայրը/ուսումնական հաստատությունը (35):




Նկար 24

Հետաքրքրական է, որ, կախված ընկերական միջավայրում ԼԳՖՏ անձանց թվից, հանդիպման վայրերը չեն փոփոխվում: Ենթադրվում էր, որ ԼԳՖՏ անձանց հետ ավելի շատ շփում ունեցող անձիք պետք է նախընտրեն ավելի սակավամարդ վայրեր՝ ելնելով անվտանգության ապահովման ծագումից, սակայն այդ կանխավարկածը չի հաստատվում:

Հասարակական միջավայր: Բայցևայնպես, չենք կարող նաև ենթադրել, որ հասարակական վայրերում ԼԳՖՏ անձիք չեն խուսափում բացահայտելու իրենց ՍԿԳԻ-ն: Սրա հիմնական պատճառներից մեկն էլ այն է, որ ԼԳՖՏ անձիք վստահ չեն իրենց անվտանգության համար: Սրա վառ ապացույցն է նաև այն, որ նրանք մշտապես խուսափում են իրենց՝ նույն սեռի զուգընկերոջ հետ հասարակական վայրերում սիրո արտահայտման վարքագիծ ցուցաբերելուց, օրինակ՝ համբուրվելուց կամ ձեռք բռնելուց՝ հավանական բռնությունից և ոտնձգությունից խուսափելու համար:

Հարցվածներից 56-ը մշտապես զգացել է սիրո արտահայտամիջոցներ օգտագործելուց խուսափելու անհրաժեշտությունը, 27-ը՝ երբեմն, միայն 11-ն է, որ չի զգացել այդ անհրաժեշտությունը և ազատ արտահայտել է իր զգացմունքները: Հարցվողներից 9-ը ընդհանրապես չի ընդունում հասարակական վայրերում մմանատիպ վարքագծի դրսևորում, դա հակասում է նրանց արժեքային համակարգին: 7 հարցվող էլ վերջին երկու տարվա ընթացքում նույն սեռի զուգընկեր ընդհանրապես չի ունեցել: (Նկար 25)



Համեմատած մյուս բնագավառների հետ՝ հասարակական հարաբերություններում խտրականության դրսևորումները ավելի քիչ են, այնուամենայնիվ առկա են:


ԼԳԲՏ հարցվածների կողմից ամենից շատ նշված խտրականության ձևը, հիմնված նրանց ՍԿԳԻ-ի վրա, ծառայությունների (ռեստորան, փաբ, տաքսի) մատուցման մերժումն է: 13 հոգի բախվել է այս խնդրի հետ: Օրինակ՝ նրանց մերժել են սպասարկել ռեստորանում, փաբում, մերժել են տուն վարձակալության տալ:

ԼԳԲՏ ընկալումները հասարակության մեջ սեփական խոցելիության մասին:

Հասարակական հարաբերությունների կարգավորման մեջ մեծ դեր ունի նաև խմբերի մասին ընկալումները հասարակության կողմից և հենց իրենց՝ խումբը ներկայացնողների կողմից: Այս բաժնում ցույց կտրվի, թե ինչպես են տեսնում ԼԳԲՏ անձինք հասարակությունում իրենց խոցելիությունը, ինչ պատճառներ են նշում:

Պատճառները, ըստ իրենց թիրախների, երկու հիմնական խմբի են բաժանվում: Թիրախները հասարակությունն ու ԼԳԲՏ անձինք են: ԼԳԲՏ անձանց խոցելության հիմնական պատճառը, ըստ հարցված ԼԳԲՏ անձանց, ԼԳԲՏ շուրջ հասարակության իրազեկվածության ցածր մակարդակն է (49): Երկրորդ պատճառը, որը ամնիջականորեն կապված է առաջինի հետ, հասարակության կողմից ԼԳԲՏ անձանց հանդեպ դրսևորվող անհանդուրժողականությունն է (48): Իսկ հարցվածներից 40-ը ԼԳԲՏ խոցելիությունը պայմանավորում է հենց ԼԳԲՏ անձանց վարքագծային առանձնահատկություններով: Վերջիններս հիմնականում դեմ են հասարակության մեջ ընդունված կարգերին: Մասնավորապես՝ հարցվողները նշում են ԼԳԲՏ անձանց գռեհիկ, օրինախախտ վարքագիծը: Հետաքրքիր է, որ այս պատասխանը նշող հարցվողները չեն նույնականացնում իրենց նշված վարքագիծը ցուցաբերող ԼԳԲՏ անձանց հետ, սակայն, միաժամանակ, խոսում են ընդհանրացված ձևով, ինչը վկայում է ԼԳԲՏ անձանց շրջանակներում սեփական խմբի շուրջ կարծարտիպերի գերակայության մասին:

Հաջորդ ամենատարածված պատասխանը ազգային մենտալիտետն է նշվել՝ որպես ԼԳԲՏ անձանց խոցելիության պատճառ: Ըստ հարցվողների ԼԳԲՏ-ն չի ներառվում, «ազգային մենտալիտետ» երևույթի շրջանակներում: (Նկար 26)



Հարցվածներից 16-ը նաև կարծրատիպերի առկայությունն է մատնանշել՝ որպես խոցելիության պատճառ: Հասարակության մեջ կարծրացած համոզմունքերը ԼԳՏ անձանց խտրականության պատճառ են հանդիսանում: Որոշ հարցված ԼԳՏ անձինք խոցելիության պատճառը տեսնում են երկրում իրավական դաշտի

ԼԳՏ անձինք սեփական խոցելիությունը պայմանավորում են հասարակության լայն շերտերի իրազեկվածության պակասով, անհանդուրժողականությամբ և ԼԳՏ անձանց գռեհիկ ու օրինախախտ վարքագծով:


անկատարելության մեջ: Մասնավորապես՝ նրանք նշում են ԼԳՏ անձանց իրավունքների բացակայությունը օրենսդրական դաշտում(14): Եղել է նաև անդրադարձ կրոնական կառույցներին ու նրանց կողմից ԼԳՏ անձանց մերժմանը ու հասարակությունում ատելության խթանմանը (6):

Նշվել են նաև այլ պատասխաններ. անձնական կյանքին հասարակական միջամտումը (6), սոցիալական պայմանները (5), ԼԳՏ տեսանելիու-

թյան պակասը (3), LԳՏՏ իրավագիտակցության ցածր մակարդակը (3):

LԳՏՏ անձանց ինքնազգացողությունը երկրում. անփոփելով LԳՏՏ անձանց իրավունքների պաշտպանվածության շուրջ մոնիթորինգը՝ հարցվողներին մի քանի հարց տրվեց նաև Հայաստանում իրենց ինքնազգացողությունից:

Նախ և առաջ, պարզվեց LԳՏՏ հարցվողների նախատրամադրվածությունը երկիրը անվերադարձ լքելու շուրջ: (Նկար 27)




Միայն հարցվածներից 24-ը չեն ցանկանում լքել Հայաստանը անվերադարձ: Մնացած 87 հարցվողները ավելի հակված են լքելու երկիրը: Նրանք իրենց որոշումը բացատրում են մի շարք համգամայնքներով: Երկիրը անվերադարձ լքելու ամենից շատ նշված պատճառը Հայաստանում իրենց ՍԿԳԻ-ի հիմքով խտրականության ենթարկվելն է (60): Երկրորդ ամենաշատ նշված պատճառը ուղղակիորեն կապված է առաջինի հետ: Դա անձնական արժեքների և երկրում ընդունված նորմերի անհամապատասխանությունն է (57): Հարցվողները նաև պատճառների մեջ ամենակարևորն են համարում ինքնարտահայտման, ազատության սահմանափակ լինելը երկրում (56):

Բացի արժեքային տարբերությունների շեշտադրումից, հարցվողները

նաև կարևորում են երկրի սոցիալ-տնտեսական վիճակը, որը ևս մեծ խթան է հանդիսանում երկիրը անվերադարձ լքելու համար (53):

Որպես պատճառ նշվել են նաև Հայաստանում քաղաքական անկայունությունը (6) և կրթական ու աշխատանքային առաջխաղացման սահմանափակությունը (7): (Նկար 28)



Ընդհանուր առմամբ, ԼԳՔՏ անձինք իրենց երջամիկ են համարում, ունեն մտերիմ մարդիկ, շրջապատված են հարազատ մարդկանցով ու դատարկության զգացում չունեն:

Հետազոտության արդյունքում հավաքված տեղեկատվությունը մասամբ կանխատեսելի էր, մասամբ էլ՝ անսպասելի: Հետազոտության արդյունքներից կարող է տպավորություն ստեղծվել, թե ԼԳՔՏ անձանց իրավունքները ամբողջովին պաշտպանված են մեր հասարակությունում: Սակայն սա հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ հարցված ԼԳՔՏ անձիք նախընտրում են թաքցնել իրենց սեռական կողմնորոշումն իրենց շրջապատից: Մյուս կողմից էլ, հասարակությունում առկա են բազմաթիվ բացասական կարծրատիպեր և նախապաշարմունքեր ԼԳՔՏ անձանց հանդեպ, ինչն էլ ավելի է խոչընդոտում ԼԳՔՏ համայնքի ներկայացուցիչների հետ կապի հաստատումը, ինչպես նաև նրանց հետազոտության մեջ ներգրավվելը:

Առանձին դեպքերի իրավիճակային նկարագրություն

ԼԳՏՏ անձանց իրավունքների մոնիթորինգի ընթացքում հավաքած տեղեկատվությունը էլ առավել համապարփակ և համընդգրկուն դարձնելու նպատակով այն համալրվել է «Իրավական կլինիկա առավել վտանգի ենթարկվող բնակչության համար» ծրագրի շրջանակներում հասցեագրված դեպքերի իրավիճակային նկարագրությամբ, որտեղ ամփոփ ձևով ներկայացված են 2011-2012թթ.-ին ԼԳՏՏ անձանց իրավունքների ոտնահարումների կոնկրետ դեպքեր:

«Իրավական կլինիկա առավել վտանգի ենթարկվող բնակչության համար» ծրագրի շրջանակներում օգնություն և համապատասխան ծառայություններ ստացել են 60-ից առավել շահառուներ: Սակայն ուսումնասիրության այս բաժնում ներկայացված են այն դեպքերը, որոնց առնչվել են ԼԳՏՏ անձինք ուսումնասիրության համար արդեն իսկ առանձնացված ոլորտներում:

Ստորև ներկայացված դեպքը ներկայացնում է առողջապահության ոլորտում ԼԳՏՏ անձնաց իրավունքների խախտման տիպիկ օրինակ.

ԼԳՏՏ անձը դիմել է բժշկական հաստատություն առողջական գանգատներով, սակայն բժիշկը, իմանալով շահառուի սեռական կողմնորոշման մասին, դիտավորությամբ սխալ բուժում է նշանակել:

Այս դեպքից հետո այդ անձը հրաժարվել է ընթացք տալ և որևէ բողոք ներկայացնել բժշկական հաստատություն և համապատասխան այլ մարմիններ՝ հետագա թվացյալ խնդիրներից խուսափելու համար:

Առողջապահության ոլորտում զանգվածային բնույթ են կրում նաև բժշկի, բժշկական զննություն կատարող համապատասխան անձանց կողմից բժշկական գաղտնիքի բացահայտումը, ոչ կոնֆիդենցիալությունը, ինչից անմասն չեն մնացել նաև այն ԳՏՏ անձինք, ովքեր ներկայացել են պարտադիր զինվորական ծառայության զննության.

Անձը ազատվել է պարտադիր զինվորական ծառայությունից իր

նույնասեռական լինելու պատճառով: Ձինվորական կոմիսարիատի աշխատակիցը, որը նաև շահառուի հարևանն է, հայտնել է շահառուի ծնողին՝ նրա զինվորական ծառայությունից ազատվելու եղանակի մասին:

Այնուամենայնիվ, նա հրաժարվեց դեպքի առնչությամբ բողոք ներկայացնելուց՝ պատճառաբանելով, որ խուսափում է դեպքի մասին ավելի շատ տեղեկատվության տարածումից:

Առավել մասսայական բնույթ են կրում ոստիկանության ծառայողների կողմից LQFS անձանց նկատմամբ բացասական կերպով տարբերակվող վերաբերմունքը, որը դրսևորվում է արժանապատվությունը նսենացնող արտահայտություններից ընդհուպ մինչև ֆիզիկական բռնություն:

Շուրջ 10 տրանսգենդեր անձինք երեկոյան բերման են ենթարկվել ոստիկանության բաժանմունք՝ բժշկական պարտադիր զննության ուղղորդելու նպատակով, որի ընթացքում երկար ժամանակ պահվել են ոստիկանության բաժանմունքում և բժշկական զննությունից հետո նորից տարվել ոստիկանության բաժանմունք, որտեղ անհիմն պահվել են մինչև հաջորդ առավոտ: Այն ուղեկցվել է տրանսգենդեր անձանց նկատմամբ վիրավորական արտահայտություններով և արժանապատվությունը նսենացնող վերաբերմունքով ընդհանրապես:

Ընդհանուր առմամբ կարող ենք փաստել, որ ոստիկանության ծառայողների կողմից վերաբերմունքը LQFS անձանց նկատմամբ առավելագույնս բացասական է եղել, ինչն արտահայտվել է բռնի, կոպիտ և արժանապատվությունը նսենացնող վերաբերմունքով, որոշ դեպքերում նաև ծառայությունների ոչ պատշաճ տրամադրմամբ:

Ինչ վերաբերվում է ծառայությունների ստացման ոլորտում ԳԲՏ անձանց նկատմամբ ընդհանուր վերաբերմունքին և մոտեցմանը, հարկ ենք համարում նշել, որ այստեղ նույնպես առկա է եղել խտրական և անհանդուրժող մոտեցում հատկապես այն անձանց նկատմամբ, ովքեր համարվում են կանացի արտաքին և վարքաձևեր ունեցող: Օրինակ՝

խանութի աշխատակիցը մերժել է նույնասեռական անձին խանութում համապատասխան սպասարկում տրամադրել և խանութից դուրս

է հրավիրել կանացի արտաքին հատկանիշների պատճառով՝ վերջինիս նկատմամբ կոպիտ և անբարյացակամ վերաբերմունք դրսևորելով:

Նույնասեռական անձը, ում սեռական կողմնորոշումը պարզել են շրջապատի մի խումբ տղաներ, պարբերաբար բռնի ուժով տարվել է մոտակա ինտերնետ ակումբը, որտեղ ենթարկվել է ֆիզիկական և հոգեբանական բնույթի մի շարք բռնությունների՝ ծեծ, խոշտանգում, հայհոյանքներ, ինչպես նաև անձի արժանապատվությունը նվաստացնող մի շարք նմանատիպ գործողություններ:

ԼԳԲՏ անձինք մեծ խնդիրների են հանդիպում նաև ընտանիքում և բարեկամական շրջապատում՝ իրենց սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության մասին բարձրաձայնելուց հետո: Եղել է նաև ամուսնալուծության դեպք, երբ հայրը իմացել է որդու սեռական կողմնորոշման մասին:

Երիտասարդը, ով հայտնել է հորն իր նույնասեռական կողմնորոշման մասին, պատճառ է դարձել ծնողների ամուսնալուծության, ինչի արդյունքում հայրը մեկնել է արտասահման և այժմ հրաժարվում է ֆինանսապես օգնել ընտանիքին այն դեպքում, երբ ուներ 2 անչափահաս երեխա և ընտանիքի միակ նյութապես ապահովողը ինքն էր հանդիսանում:

Այս օրինակները հանդիսանում են ԼԳԲՏ անձնաց նկատմամբ դրևորվող վերաբերմունքի և մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների խախտման միայն ընդհանուր վիճակը:

DIY ակումբի հրկիզման դեպքը

DIY ակումբը սկսել էր իր գործունեությունը 2011թ. ապրիլ ամսից: Ակումբի բացումից մոտ երկու ամիս անց՝ 2011թ. հունիս ամսից սկսած հաճախակի ճնշումների և հարձակումների է ենթարկվել երիտասարդ ֆաշիստական խմբավորումների կողմից: Հարձակումները մշտապես ուղեկցվել են ակումբի գույքը և ակումբում եղած իրերը փչացնելու և ոչընչացնելու՝ շէր ջարդելու, ապակիներ կոտրելու, ակումբի տարածքում քեչելու և նմանատիպ մի շարք այլ գործողություններով:

2012 թ-ի մայիսի 8-ին ԼԳՔՏ համայնքի դեմ ուղղված մի շարք դեպքերը հանգեցրել են այն բանին, որ ԼԳՔՏ համայնքի համար ատելության քարոզչության և բռնության հրահրման խնդիրն այլևս ամենօրյա արդիականության է ձեռք բերել: Այդ օրը մի քանի ազգայնամոլներ պայթեցրին Երևանի ԼԳՔՏ-ընկերական ակումբներից մեկը՝ «DIY ակումբը»: Մի քանի օր անց ծայրահեղականները փչացրեցին ակումբի պատերը ֆաշիստական գրաֆիտի պատկերներով: Այս միջադեպը տեղի ունեցավ ակումբի տնօրեններից մեկի՝ Արմինե (Ծոմակ) Օգանեզովայի վերաբերյալ հասարակական մեծ աղմուկի պատճառով, ով մեկնել էր Թուրքիա՝ մասնակցելու գեյ շքերթի:

Այս դեպքը ոչ միայն փաստում է այն մասին, որ ազգայնամոլները ԼԳՔՏ համայնքի համար մեծ վտանգ են ներկայացնում, այլև այն, որ նրանց կողմից որդեգրած բռնության հրահրման այս քաղաքականությունը շարունակական բնույթ է կրում: Ակումբի պատերին արված գրաֆիտի պատկերներում գրված է. «Ծոմակ, չենք թողի, որ շնչես» և «իմչքան էլ վերանորոգես, միևնույն է գալու ենք», «հեռացիր, թե չէ վերջդ կտանք» կամ «սրան վառելն էլ քիչ է»: Չնայած անձի նկատմամբ բացահայտ արված այս սպառնալիքներին՝ պետությունը որևէ քայլ չի ձեռնարկել սանձելու այս սադրանքը: Չնայած երկու երիտասարդ ձեռբակալվեցին որպես կասկածյալներ, այնուամենայնիվ, ՀՀ ընդդիմադիր կուսակցություններից մեկի՝ Հայ Հեղափոխական Դաշնակցության (ՀՀԴ) անդամները՝ Արծվիկ Մինասյանը և Հրայր Կարապետյանը, վճարեցին գրավը որպես խափանման միջոց, պաշտպանեցին երիտասարդներին՝ ասելով, որ այդ երիտասարդները շարժվել են մեր հասարակության և ազգային գաղափարաբանության համատեքստում, ճիշտ ձևով:⁵

Այս դեպքերից հետո Հայաստանում հատկապես ավելացան ԼԳՔՏ խնդիրների վերաբերյալ հանրային քննարկումները՝ ներկայացնելով դրանք ապազգային գաղափարախոսության շրջանակներում: Երկու երիտասարդ տղաներ, ովքեր պնդում էին, որ իրենք են կատարել այս ոճրագործությունը հարցազրույց տվեցին «Երկիր մեդիա» հեռուստաընկերությանը՝ նշելով, որ «DIY ակումբը չպետք է այստեղ գոյություն ունենա, Ծոմակի նմաններն այստեղ չպետք է գոյություն ունենան: Ծոմակը գնում ու

⁵ <http://www.panorama.am/am/society/2012/05/15/minasyan-about-comak/>

մասնակցում է գեյ շքերթի ու ներկայացնում է իր ակունքը որպես նորմալ, բայց բոլոր գեյերն այնտեղ են լինում»:⁶

Ակունքի պայթյունից որոշ ժամանակ անց ՀՀ Ազգային ժողովի փոխ-խոսնակ Էդուարդ Շարմազանովը հայտարարեց. «Ես, որպես Հայաստանի քաղաքացի եւ ազգային-պահպանողական կուսակցության անդամ, միանգամայն ճիշտ ու արդարացված եմ համարում երկու հայ երիտասարդների ընդվզումը մեր երկրում այլասերության որջ ստեղծած եւ հասարակությունն իր բարոյական արժեքներից հեռացնելու նպատակ ունեցող համասեռամուլների դեմ»⁷: Մայիսի 21-ին էլ ՀՀԳ անդամ Արթուր Աղաբեկյանը նշեց, որ ողջունում է, որ հայ երիտասարդները ոչ միայն իրենց ահազանգն են հնչեցնում, այլև կոնկրետ քայլերով են պայքարում մեր ազգային արժեքներն ու հավատը խարխուղ արատների դեմ⁸: Պետական պաշտոնյաների կողմից արված այս հայտարարությունները բռնության կոչ են հանդիսանում ուղղված LԳԲՏ համայնքի դեմ:

«Բոլոր նրանք, ովքեր փորձում են իրենց պաշտպանության տակ առնել մեր հասարակությունը այլասերող համասեռամուլներին, պղծում են հայերիս ազգային նկարագիրը: Ես, որպես Հայաստանի քաղաքացի եւ ազգային-պահպանողական կուսակցության անդամ, միանգամայն ճիշտ ու արդարացված եմ համարում երկու հայ երիտասարդների ընդվզումը մեր երկրում այլասերության որջ ստեղծած եւ հասարակությունն իր բարոյական արժեքներից հեռացնելու նպատակ ունեցող համասեռամուլների դեմ: Իսկ մարդու իրավունքների այն պաշտպաններին, ովքեր այս միջադեպի առիթով ջանում են էժան դիվիդենտներ շահել, կոչ են անում՝ պաշտպանել նախևառաջ համամարդկային ու ազգային արժեքները»: Էդուարդ Շարմազանով

«Այդ երկու երիտասարդները հստակ գործողությամբ ցույց են տվել, որ կան հայեր, ովքեր ոչ մեկին թույլ չեն տալու, որ հայ ժողովրդի ինքնությունը որեւէ անհատ խաթարի կամ վտանգի: Մենք սատարել ենք այդ երիտասարդներին, որ մեր ժողովուրդը հայոց բարձրավանդակում արժանապատիվ ապագա ունենա»:

⁶ <http://www.youtube.com/watch?v=uRq8ahf0p6g>

<http://iravunq.wordpress.com/2012/05/17/aa44/>

⁷ <http://www.aravot.am/2012/05/17/71465/>

⁸ <http://www.aravot.am/2012/05/18/71892/>

«Բազմազանության երթի» դեպքը

«Չանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» և «Կանանց ռեսուրսային կենտրոն» հասարակական կազմակերպությունները մայիսի 21-ին՝ ժամը 16:15, Երևանում նախաձեռնել էին «Բազմազանության երթ», որն իրականացվում էր մշակութային բազմազանության համաշխարհային օրվա շրջանակներում՝ ցույց տալու և արժևորելու մշակութային, ազգային, մարդկային և բուսական բազմազանության առկայությունը մեր երկրում: Նրանք պատրաստել էին ՉՉ-ում ապրող ազգային փոքրամասնությունների, ռասայական, բուսական բազմազանության, բազմակարծության և բազմամշակութայնության մասին պաստառներ:

Երթի վերաբերյալ սոցիալական ցանցերով տարբեր անձանց կողմից տարածվել էր ապատեղեկատվություն, թե իբր միջոցառումն այլ ենթատեքստ ունի՝ «զեյ շքերթ» է: Այդ կապակցությամբ ծայրահեղական տրամադրված խմբերը, «հայրենասիրության» լուսի ներքո, կազմակերպված կերպով հավաքվել էին Մ. Սարյանի արձանի մոտ՝ երթի մասնակիցների նկատմամբ բռնություն գործադրելու նպատակով:

Խաղաղ երթին մասնակցում էին տարբեր հասարակական կազմակերպությունների, քաղաքացիական նախաձեռնությունների, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև Չայաստանում ապրող փախստականներ, տարբեր սոցիալական խմբերի ներկայացնող մարդիկ, քաղաքացիական ակտիվիստներ: Ֆաշիստական լոզունգներ, մասնավորապես՝ «zieg heil» գոռալով, սպառնալիքներով, հայիռյելով, ֆիզիկական բռնության կոչերով ու գործողություններով՝ ծայրահեղականներն ամեն կերպ խոչընդոտեցին երթի ընթացքը՝ ահաբեկելով խաղաղ երթի մասնակիցներին:

Անգամ ՉՉ Ոստիկանության ներկայությունն արգելք չհանդիսացավ, որ ագրեսիվ տրամադրված, մոլեռանդ ամբոխը շարունակի իր անօրինական գործողությունները և հարձակումները: Այս իրավիճակում ՉՉ Ոստիկանության ներկայացուցիչներին դժվարությամբ հաջողվեց ապահովել երթի մասնակիցների անվտանգությունը: Երթի վերաբերյալ բազմաթիվ տեսանյութերը հիմնավորում են թե՛ «հակացույցի» կազմակերպված բնույթը, թե՛ ֆաշիստական, ռասիստական ու բռնություն գործադրելու կոչերի առկայությունը:

DIY ակունքի պայթեցման և «Բազմազանության երթի» վրա հարձա-

կումների առնչությամբ «Յեկսինկյան Ասոցիացիա» ՀԿ-ն հայտարարություն էր ուղարկել ՀՀ գլխավոր դատախազ Ա. Հովսեփյանին, որը, ցավոք, մինչ այժմ անպատասխան է մնացել:

Առաջարկություններ

Հիմք ընդունելով «ԼԳԲՏ իրավունքների ոտնահարման մոնիթորինգ» սոցիոլոգիական հետազոտության ընթացքում հավաքված և վերլուծած տեղեկատվությունը՝ «Հանրային տեղեկատվություն և գիտելքի կարիք» ՀԿ-ն մշակել է առաջարկությունների փաթեթ՝ ուղղված.

- ՀՀ պետական մարմիններին,
- ՋԼՄ-ներին,
- Հասարակական կազմակերպություններին,
- Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին,
- Միջազգային կազմակերպություններին

ՀՀ Պետական մարմիններ.

Հայաստանը հռչակված է որպես ժողովրդավար պետություն, որի հիմնական ուղենիշը լիբերալ արժեքների ինստիտուցիոնալականացումն ու կիրարկումն է, ուստի պետությունը և շահագրգիռ բոլոր կազմակերպություններն ու միությունները, գործելով ՀՀ Սահմանադրության և գործող օրենքների շրջանակներում, պետք է հնարավորինս նպաստեն հասարակության՝ որպես ժողովրդավար մշակույթի կրողի ձևավորման գործին:

Ժողովրդավար հասարակության հիմնական ցուցիչներից է փոքրամասնություն կազմող խմբերի հանդեպ հանդուրժողականությունը, ինչպես նաև այդ խմբերի իրավունքների և ազատությունների երաշխավորումը:

Առաջարկություններ ՀՀ Կառավարությանը.

1. Իրականացնել միասնական պետական քաղաքականություն՝ հիմք ընդունելով հասարակության կյանքի բոլոր ոլորտներում խտրականության բացառման սկզբունքը:

2. Իրականացնել ՀՀ Կառավարության 2012-2017թթ. ծրագրով նախատեսված սոցիալական քաղաքականությունն ու մարդկային կապիտալի զարգացումը՝ հիմք ընդունելով հասարակության խոցելի խմբերի, տվյալ դեպքում ԼԳՏՏ անձանց նկատմամբ տարբեր ոլորտներում խտրականության բացառման սկզբունքը:

2.1 Առողջապահության, կրթության և գիտության, մշակույթի և այլ ոլորտներում բարեփոխումներ իրականացնելիս առաջնորդվել խտրականության արգելմամբ և ապահովել խոցելի խմբերի, մասնավորապես ԼԳՏՏ անձանց՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված իրավունքների և ազատությունների իրականացման համար հավասար հնարավորություններ:

2.2 Իրականացնել խտրականությամբ պայմանավորված անհավասարություն ծնող պատճառների վերացմանն ուղղված գործողություններ հասարակության բոլոր ոլորտներում, մասնավորապես.

- Ներառել սեռականության և հանդուրժողականության թեմաները ֆորմալ կրթական համակարգում՝ միաժամանակ ապահովելով դրանց իրականացումը համապատասխան կրթություն ստացած բարձրորակ մասնագետների կողմից.

- Ուսուցանել մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի, հանդուրժողականության և հավասարության սկզբունքների բացառիկ կարևորության և առաջնահերթության գաղափարները ոստիկանության ծառայողների շրջանում ոստիկանության ծառայողի որակավորման (վերապատրաստման) ժամանակ.

- Բարձրացնել հանրության իրազեկվածությունը սեռականության, մասնավորապես ԼԳՏՏ անձանց վերաբերյալ, ինչպես նաև հասարակության մեջ սերմանել հավասարության, խտրականության բացառման և հանդուրժողականության գաղափարները առավել խոցելի խմբերի, մասնավորապես ԼԳՏՏ անձանց նկատմամբ:

3. Հաշվի առնել խտրականության բացառման սկզբունքը նորմատիվ-իրավական ակտեր ընդունելիս՝ ապահովելով, որ այս կամ այն իրավական ակտի ընդունումը կամ մերժումը խոչընդոտ չհանդիսանա հասարակության մեջ խոցելի խմբերի, այս դեպքում՝ ԼԳՏՏ անձանց իրավունքների և ազատությունների իրացման համար:

ՀՀ Ազգային ժողովին.

1. Ընդունել հակախտրական օրենսդրություն, որը կարգելի ցանկացած հիմքով խտրականությունը հասարակության բոլոր ոլորտներում և արդյունավետ պաշտպանություն կնախատեսի խտրականության ենթարկվող խմբերի, այդ թվում LQFS անձանց համար՝ ապահովելով հավասար հնարավորություններ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով վերջիններիս իրավունքների և ազատությունների իրացման համար:

2. Օրենքներ ընդունելիս հիմք ընդունել խտրականության բացառման սկզբունքը՝ որպես մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքների և ազատությունների ապահովման հիմնարար կանոն:

3. Ընդունել ատելության, բռնության կոչերի և քարոզչության արգելմանն ուղղված օրենսդրություն, որը կներառի և պատասխանատվություն կսահմանի ատելության և բռնության քարոզչության դրսևորումների համար:

4. Կատարել համապատասխան փոփոխություններ ՀՀ Քրեական օրենսգրքում՝ անձի սեռական կողմնորոշման/ գենդերային ինքնության շարժառիթով կատարված հանցագործությունները ատելության շարժառիթով հանցագործությունների շարքին դասելու համար:

ՉԼՍ-ներից

1. Խթանել նոր տեղեկատվական հաղորդումների հեռարձակումը, որոնք կլուսաբանեն սեռականությանն առնչվող ժամանակակից մոտեցումները: Մշակվող և իրականացվող հետագա կրթական ծրագրերում ներգրավել համապատասխան մասնագետների՝ բժիշկների, հոգեբանների, սոցիալական գիտությունների մասնագետների, ովքեր հանրությանը կիրազեկեն հանդուրժողականության և սեռականության ժամանակակից մոտեցումների մասին:

2. Նվազեցնել ՋԼՄ-ներում բացասական կարծրատիպերը և նրանց ազդեցությունը ԼԳԲՏ անձանց վրա՝ հասարակության խտրական վերաբերմունքը կանխելու համար: Կանխարգելել թյուր տեղեկատվության տարածումն ու ապահովել լիարժեք հանրային իրազեկվածություն:

3. Ձերծ մնալ թյուր տեղեկատվության տարածումից, ինչպես նաև խուսափել մանիպուլյատիվ տեխնիկաների կիրառման միջոցով բացասական կարծրատիպեր և վերաբեմունք ստեղծելուց, ապահովել բազմակողմանի և առավել անաչառ տեղեկատվության լուսաբանում և հանրությանը ներկայացում:

4. Ձերծ մնալ ատելություն պարունակող կոչերից և ատելության քարոզչությունից:

5. Մշակել առաջարկություններ՝ ուղղված տեղական հեռուստաընկերություններին՝ վերանայելու ծրագրերում/հաղորդումներում առկա գեմ-դերային հիմնահարցերին և սեռականությանն առնչվող կարծրատիպերը:

6. ՋԼՄ ներկայացուցիչների համար շատ կարևոր է հետևել լրագրողական էթիկայի կանոններին՝ իրենց աշխատանքում խուսափելով ռեյտինգի ու ճանաչվածության համար դրանց խախտումից:

ՀԿ-ներին

1. Ապահովել այլընտրանքային հարթակ՝ տեղեկացնելու, քննարկելու մարդու իրավունքերի, սեռականության, հանդուրժողականության թեմաները:

2. Ջատագովել և խթանել ՀՀ-ում հակախտրական օրենսդրության ընդունումը:

3. Փաստագրել և արխիվացնել մարդու իրավունքների ոտնահարման և խտրականության դեպքերը՝ որպես հիմնավորում և ապացույց ՍԿԳԻ-ով պայմանավորված խտրականության առկայության մասին:

4. Մոբիլիզացնել հասարակական ռեսուրսները՝ ոլորտում առկա խըն-

դիրների շուրջ առավել շոշափելի արդյունքների հասնելու համար, մասնավորապես՝ համախմբում միևնույն նպատակի շուրջ, նպատակաուղղված ընթացակարգ, կազմակերպությունների միջև համերաշխություն և այլն:

Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ

1. Բարձրացնել հանրության իրազեկվածությունը խտրականության երևույթի, դրանից բխող բացասական հետևանքների և ժողովրդավարական հասարակությունում խտրականության բացառման և հավասարության սկզբունքների կարևորության մասին:

2. Բարձրացնել հանրության իրազեկվածությունը ատելության և բռնության կոչերի ու քարոզչության, դրանց ոչ իրավաչափության վերաբերյալ:

3. Իրականացնել պատշաճ ջատագովություն՝ արդյունավետ հակախտրական օրենսդրության մշակման և ընդունման համար:

4. Ապահովել, որ իր կողմից մշակվող հակախտրական օրենսդրությունը ներառի խտրականության բոլոր ձևերը և ապահովի արդյունավետ պաշտպանություն LԳԲՏ անձանց համար:

Միջազգային կազմակերպություններից

1. Հատուկ ուշադրություն դարձնել ՀՀ-ում փոքրամասնություն կազմող խմբերի, մասնավորապես LԳՔՏ անձանց իրավունքների պաշտպանությանը՝ որպես ՀՀ կողմից մի շարք միջազգային պայմանագրերով ստանձնած պարտականություն:

2. Հատուկ ուշադրություն դարձնել ՀՀ-ում LԳՔՏ ոլորտին առնչվող քաղաքացիական հասարակական կազմակերպությունների հետ սերտ համագործակցությանը՝ ոլորտում առկա խնդիրները վեր հանելու և այդ խնդիրների լուծմանն ուղղված գործողությունների շուրջ համագործակցելու համար:





Մոնիտորինգն իրականացրել է Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք ՀԿ-ն՝ Սի-Օ-Սի Նեդերլանդի հետ համատեղ:
+374 60 377277 | info@pinkarmenia.org | www.pinkarmenia.org

